ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

XIX դ. վերջին քառորդին կապիտալիստական հարաբերությունների զարգացումը որոշակի փոփոխություններ մտցրեց Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքում։ Գյուղացիության քայքայմանն ու շերտավորմանը զուգընթաց ձևավորվում էր կապիտալիստական հասարակարգի գլխավոր արտադրողական ուժը՝ պրոլետարիատը[1], որը XIX դարավերջին որոշակի թիվ էր կազմում։ 1900 թ. պաշտոնական տվյալներով Երևանի նահանգում աշխատում էր ավելի քան 8200 բանվոր[2]։ Եթե այս թվին ավելացնենք նաև Ալավերդու և Ղափանի (սրանք գտնվում էին Երևանի նահանգից դուրս) պղնձարդյունաբերության մեջ աշխատող մոտ վեց հազար բանվորներին[3] և Կարսի մարզի հազար բանվորներին[4], ապա բանվորների թիվը կանցնի 15 հազարից։ Եթե դրանից անդամ հանենք ջրաղացներում աշխատողների թիվը (մոտ երեք հազար)[5], ապա վերոհիշյալ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի բանվորների թիվը կանցնի տասը հազարից։

Հայ բուրժուական ազգի ձևավորման գլխավոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ հայ բուրժուազիայի և արդյունաբերական պրոլետարիատի գերակշռող մասը պատմական մի շարք հանգամանքների բերումով ձևավորվեց և սկսեց գործել Արևելյան Հայաստանի սահմաններից դուրս։ Երկրամասի բազմազգ բուրժուազիայի շրջանում ամենից հաստատուն դիրքերը գրավել էր տնտեսապես ուժեղ հայ բուրժուազիան[6]։ Ինչ վերաբերում է հայ պրոլետարիատին, ապա վերջինս նույնպես մեծ թիվ էր կազմում Անդրկովկասի պրոլետարիատի շարքերում։ Այսպես, օրինակ, 1897 թ. Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների 29%-ը հայեր էին[7]։ Զգալի թվով հայեր էին աշխատում Թիֆլիսի ծխախոտի, կոշիկի և այլ գործարաններում, գլխավոր երկաթուղային արհեստանոցներում, Բաթումի գործարաններում և այլուր։ XIX դ. վերջին Վրաստանի բանվոր դասակարգի մոտ 35%-ը կազմում էին հայ բանվորները[8]։

Արևելյան Հայաստանի պրոլետարիատն իր ազգային կազմով միատարր չէր։ Նրա շարքերում կային ադրբեջանցիներ և ռուսներ, վրացիներ և ուկրաինացիներ, հույներ, պարսիկներ և այլն։ Բանվորները դաժան շահագործման էին ենթարկվում, աշխատում օրական 12—14 ժամ և ավելի, մեծ ուշացումնե-

---

[1] *1890-ական թվականների արևելահայ բանվորական շարժումների մասին տե՛ս Վ. Ավետիսյան, Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից, Երևան, 1962։*

[2] «Обзор Эриванской губернии за 1900 г.», с. 8.

[3] *«Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 13։*

[4] *ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 2914, ց. 1, գ. 507, թ. 6, տե՛ս նաև Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, հ. 1, Երևան, 1967, էջ 46։*

[5] М. Адонц, Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, с. 450.

[6] «Очерки истории коммунистических организаций Закавказья», ч. 1, Тбилиси, 1968, с. 19.

[7] В. Парсамян, История армянского народа (1801—1900), Ереван, 1972, с. 265.

[8] Э. Хоштария, Очерки социально-экономической истории Грузии, Тбилиси, 1974, с. 195.

ռով ստանում առանց այն էլ չնչին աշխատավարձը, գտնվում կենցաղային անմխիթար պայմաններում։

Անտանելի ծանր էր Ալավերդու և Ղափանի պղնձաձուլական գործարանների, երկաթուղու շինարարության, Կողբի աղահանքերի և մյուս վայրերի ու ձեռնարկությունների բանվորների դրությունը։ Ահա թե ինչ է գրում Կողբի աղահատների մասին «Մուրճ» ամսագիրը. «Արշալույսը դեռ չբացված մշակները կալմ ու պատրաստ խմբավորված էին լինում աղահանքի մոտ, յուրաքանչյուրը իր օրվա հացը մեջքին կապած «տեր աստված» կանչելով մտնում էին որջերից ներս և սկսում կատարյալ խլուրդային աշխատանք, չիմանալով ինչ հանկարծահաս վտանգի կարող են ենթարկվել։ Աշխատում էին ձեռքի ճրագների լուսավորության ներքո։ Դուրս գալով այդ խավար խորխորատներից արևի մայր մտնելուց հետո, երկնքի վրա սփռած վերջալույսը նրանց համար կարմիր առավոտ էր թվում»[9]։

Բանվորներից շատերը, որ դեռ երեկ էին թողել գյուղական խավարի թագավորությունը, պարզորոշ չէին պատկերացնում իրենց նոր տեղն ու դերը, չգիտեին իրենց պայմանների բարելավման ձևերն ու միջոցները։ Խոսելով Կարս քաղաքի բանվորների թշվառ վիճակի մասին, «Մուրճ» ամսագիրը նշում էր, որ դրա պատճառներից մեկն էլ այն է, որ բանվորները միավորված չեն և որ ընդհանուր շահերի պաշտպանության համար միասնաբար չեն հանդես գալիս[10]։

Բանվորական շարժման սկզբնավորումը և հաստատումը սերտորեն կապված էին երկրի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման հետ։ Կապիտալիստական շահագործմանը զուգընթաց աստիճանաբար ձևավորվում էր նաև բանվորների դասակարգային գիտակցությունը, սկիզբ էր դրվում բանվորական շարժմանը, որը 1890-ական թվականներին Անդրկովկասում նկատելի աշխուժացում ապրեց։ Կովկասի կառավարչապետ Գոլիցինը Նիկոլայ II-ին ուղղած զեկուցագրում նշում էր. «Անդրկովկասում բանվորական հարցը ավելի ու ավելի է բորբոքվում՝ ապագայում սպառնալով խոշոր բարդություններ»[11]։ Բաքվի, Թիֆլիսի և Բաթումի բանվորական գործադուլներին ակտիվ մասնակցում էին նաև տեղի հայ բանվորները։ Համատեղ պայքարի ընթացքում ամրանում էր երկրամասի բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ միասնությունը։

Մինչ XIX դ. 90-ական թվականներն Արևելյան Հայաստանում եղել են առանձին բանվորական ելույթներ, սակայն դրանք տարերային պոռթկումներ էին, բանվորական շարժման լոկ նախաքայլեր։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ նոր էր կազմավորվում արևելահայ պրոլետարիատը։ Այդպիսին էին, օրինակ, 1864 թ. Ալավերդու պղնձաձուլական գործարանի բանվորների գործադուլը[12], 1860—1870-ական թվականներին Սուրմալուի գավառի Կողբի աղահանքերի բանվորական ելույթները[13]։ Այսուհանդերձ, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի դասակարգային պայքարի՝ որպես հասարակական կյանքի նոր, առաջմղիչ ուժի պատմության պարբերացման սկիզբը համարվում է անցյալ դարավերջի վերջին տասնամյակը։ Միայն կապիտալիզմը կարող էր ծնել իր գերեզմանափորին՝ բանվոր դասակարգին, հետևաբար և բանվորական շարժումը։ XIX դ. 90-ական թվականներին արևելահայ պրոլետարիատի ելույթները համեմատաբար հաճախակի են դառնում, որոնց վրա ինչ որ չափով սկսում է զգացվել երկրամասի արդյունաբերական կենտրոնների բանվորական շարժումների ազդեցությունը։ 1895 թ. հուլիսին գործադուլ են հայտարարում

---

9 *«Մուրճ», 1896, № 2։*

10 *Նույն տեղում, 1890, № 1։*

11 Центральный Государственный исторический архив Груз. ССР (*այսուհետև՝* ЦГИА Груз. ССР.), ф. 12, оп. 13, д. 224, л. 234.

12 О. Туманян, Экономическое развитие Армении, ч. 1, Ереван, 1954, с. 182.

13 *Վ. Պարսամյան, նշվ. աշխ., էջ 335—336։*

Ալեքսանդրապոլի տպարաններից մեկի բանվորները։ «Ամսի 25-ին Մալխասյանի տպարանի բոլոր բանվորները գործադուլ էին արել. գործադուլի պատճառը,— կարդում ենք «Մշակ» թերթում,— ռոճիկի քչությունը և անկանոն վճարելն է։ Ինչպես ասում են, բանվորները ուր հարկն է բողոք են տալու, որպեսզի իրենց հասանելիք օրավարձը ստանան։ Այդ տպարանում բանվորները ստանում են ամսական 3—12 ռուբլի։ Օրական բանում են 14—16 ժամ»[14]։

Անցյալ դարավերջի 90-ական թվականներին Արևելյան Հայաստանում ծավալված ամենամեծ շինարարությունը Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու շինարարությունն էր՝ թե՛ շինարարական աշխատանքների ծավալով, թե՛ նյութական միջոցների ներդրմամբ ու երկրի տնտեսական զարգացման համար ունեցած նշանակությամբ և թե՛ այդտեղ կենտրոնացած բանվորական ուժի առումով։ «Մշակ» թերթի տվյալների համաձայն, այդ երկաթգծի շինարարության վրա աշխատում էին շուրջ 10 հազար բանվոր[15]։ Ընդհանրապես Արևելյան Հայաստանի բանվորական շարժման վրա իր կնիքն էր դնում այն հանգամանքը, որ փոքր խմբերով ցրված լինելով մասնավոր ձեռնարկություններում՝ բանվորները կենտրոնացված ուժ չէին ներկայացնում։ Բացառություն էին կազմում պղնձարդյունաբերության գործարանները և վերոհիշյալ երկաթգծի շինարարությունը։ Ուստի պատահական չէ, որ բանվորական առաջին ելույթներն այստեղ համեմատաբար առավել վառ դրսևորվեցին։

Թիֆլիս-Կարս երկաթուղու շինարարության բանվորներն անչափ տուժում էին կապալառուների և ենթակապալառուների կամայականություններից ու անօրինականություններից։ Իրենց կատարած աշխատանքի դիմաց նրանք շատ ցածր էին վարձատրվում, հաճախ մեծ ուշացումներով էին ստանում աշխատավարձը։ Թիֆլիսի երկաթուղային գլխավոր արհեստանոցների և դեպոյի բանվորների ելույթների ազդեցության տակ Թիֆլիս-Կարս երկաթուղու շինարարության Ախթալայի, Ջամալուի և Կարսի տեղամասերի հարյուրավոր բանվորներ իրենց կենսական շահերի պաշտպանության համար գործադուլների են դիմում, որոնք ճնշելու համար անմիջապես գործի էր անցնում ոստիկանությունը[16]։

Պայքարի առաջին ազդանշանը տվեցին Ախթալայի տեղամասի բանվորները։ Կովկասի կառավարչապետին Թիֆլիսի նահանգապետի հասցեագրած զեկուցագրից տեղեկանում ենք, որ 1896 թ. ապրիլի 8-ին մոտ 200 բանվոր գործադուլ են անում և կապալառուից պահանջում անմիջապես վճարել իրենց աշխատավարձը։ Բայց ինչպես վկայում է արխիվային փաստաթուղթը, «ոստիկանական միջոցներով կարգը վերականգնվում է»[17]։ Նոր բարդություններից խուսափելու նպատակով կապալառուն սկսում է վճարել բանվորների մի մասի աշխատավարձը։ Սակայն տեղեկանալով, որ ոչ բոլորն են ստանալու աշխատավարձ, տարբեր ազգությունների պատկանող մոտ 400 բանվոր ապրիլի 15-ին նորից են հավաքվում գրասենյակի մոտ։ Մահակներով զինված նրանք հարձակվում են ոստիկանների վրա, խլում նրանց մոտ եղած զենքը։ Վերջիններս դիմում են փախուստի։ Սակայն բանվորների դեմ շուտով ոստիկանական նոր ուժեր են ուղարկվում։ Առավել ակտիվություն հանդես բերած 8 բանվոր ձերբակալվում և դատի են տրվում[18]։ Վերոհիշյալ հուզումների և դրանց հետևանքների մասին ժամանակի հայ պարբերական մամուլի օրգաններից մեկը՝ «Արձագանք» թերթը, գրում էր. «Կարս-Երևանյան երկաթուղու բանվորներին փողը բաժանվեց, սակայն ահագին կռիվներից հետո, որ և մի քանի մարդու վիրավորեցին և մոտ 10 մարդ էլ բանտարկվեց, որովհետև ինչպես լսում ենք, բանվորներին վճարելիք փողերը սկզբում չեն կամեցել լրիվ

14 «Մշակ», 1895, № 88։

15 Նույն տեղում, 1896, № 90։

16 Վ. Ավետիսյան, Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից, տե՛ս նաև ЦГИА Груз. ССР. ф. 12, оп. 1, д. 2343, оп. 16, д. 9. 32, ф. 313. оп. 1, д. 5:

17 ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 16, д. 9, л. 1.

18 Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 29—32։

տալ։ Խեղճ բանվորներին այնքան չարչարեցին՝ մի քանի անգամ Թիֆլիս և այլուր քաշ տալով, որ եթե հաշվենք՝ հազիվ թե օրավարձը 10 կ. նստի»[19]։

Ախթալայի տեղամասի բանվորների ելույթը սթափեցրեց տեղական իշխանություններին և երկաթուղու շինարարության ղեկավարությանը։ Այն միաժամանակ ոգեշնչող նշանակություն ունեցավ հարևան տեղամասերի բանվորների համար։ Այսպես, օրինակ, 1896 թ. օգոստոսի 11-ին ըմբոստացան Ղարաքիլիսայի, իսկ դեկտեմբերի 3—7-ը՝ Ջամալուի տեղամասերի բանվորները[20]։ Ուշագրավ են հատկապես Ջամալուի տեղամասի բանվորական հուզումները, որոնք լայն արձագանք գտան։ Այլևս չկարողանալով տանել կապալառու Դեմոսիի կամայականությունները, բանվորները թողնում են աշխատանքը և մոտ 300 հոգով ուղղվում դեպի գրասենյակ։ Այնուհետև դեպքերը զարգանում են համարյա նույն արագությամբ ու ընթացքով, ինչպես որ Ախթալայում։ Միակ տարբերությունը լինում է այն, որ այստեղ կազակները կրակում են ոչ թե օդում, այլ բանվորների վրա, որի հետևանքով երեք հոգի վիրավորվում են։ Կովկասի կառավարչապետին ուղղած հեռագրում խոսելով բանվորական այդ «անկարգություններին» մասին, Երևանի նահանգապետն անգամ ստիպված էր ընդունել, որ բանվորները պաշարել են Դեմոսիի գրասենյակը, որովհետև երկար ժամանակ խաբված են եղել խոստումներով և օգոստոս ամսվա սկզբից աշխատավարձ չեն ստացել[21]։ Ալեքսանդրապոլի գավառապետն իր զեկուցագրում այդ նույն կապալառուին մեղադրում էր կամայականության մեջ, որը հաշվի չի նստում «բանվորների օրինական շահերի հետ»[22]։ Սակայն դժվար չէ բնութագրել նաև նման խոսքերի հեղինակներին, որոնք կապալառուին պատժելու փոխարեն շտապում են Ջամալու ուղարկել կազակների ջոկատ։

Մի քանի օր տևած պայքարի շնորհիվ բանվորները, ի վերջո, հասնում են իրենց արդարացի պահանջի բավարարմանը։ Ուշագրավ է, որ բանվորական այս ելույթի մասին տեղեկացվում է անգամ Նիկոլայ II-ը։ 1890—1900 թթ. ընթացքում Ռուսաստանում տեղի ունեցած «բանվորական անկարգություններին» վերաբերյալ կայսրին ներկայացրած ոստիկանության դեպարտամենտի զեկուցագրում, որտեղ, անշուշտ, արձանագրված են առավել աչքի ընկած ելույթները, 1896 թ. վերաբերող բաժնում (ի դեպ, Ռուսաստանում այդ թվականին եղել է նման 43 ելույթ)[23] հիշատակվում է նաև Թիֆլիս-Կարս երկաթուղու շինարարության Ջամալուի տեղամասի բանվորների դեկտեմբերյան ելույթը[24]։

Նույն հոդի վրա բանվորական հուզումներն ավելի բուռն են դրսևորում 1897 թ. հոկտեմբերին՝ Կարսում (երկաթգծի շինարարության 5-րդ տեղամասում)[25]։ Աշխատավարձը ժամանակին և լրիվ չստանալու կապակցությամբ բանվորները հաճախ էին դիմել իշխանություններին, սակայն ապարդյուն։ Օգտվելով Կովկասի կառավարչապետ Գոլիցինի՝ Կարսում գտնվելուց, նրանք գրավոր բողոք են ներկայացնում նաև նրան[26]։

Հոկտեմբերին բանվորական հուզումներն ավելի լայն ծավալ են ընդունում։ Խուսափելով իրենց համար անցանկալի հետևանքներից, կապալառուները դիմում են փախուստի՝ առանց բանվորների հետ վերջնահաշիվ կատարելու։ Հոկտեմբերի 24-ին մոտ 250 բանվորներ գործադուլ են անում և իրենց հասանելիք գումարը ստանալու պահանջով ներկայանում շինարարության տե-

---

19 «Արձագանք», 1896, № 50։

20 Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 33—37։

21 ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 16, д. 9, л. 10.

22 Նույն տեղում, թ. 18։

23 Центральный государственный архив Октябрьской революции, ф. ДП, 3-е делопроизводство, 1900 г., д. 1897, л. 314.

24 Նույն տեղում, թ. 202։

25 Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 38—40։

26 ЦГИА Груз. ССР, ф. 313, оп. 1, д. 5 л. 20.

ղամասի պետին։ «Իր անձը բռնությունից պաշտպանելու» խնդրանքով վերջինս դիմում է Կարսի նահանգապետին[27]։ Ժամանում են ոստիկանական լրացուցիչ ուժեր, որոնց հետ ընդհարման ժամանակ մի քանի բանվորներ ձերբակալվում են[28]։ Կարսի բանվորների պայքարը դրանով չի ավարտվում։ Շատ շուտով, մի քանի հարյուր բանվորներ թողնում են աշխատանքը և մեկնում Թիֆլիս։ Նրանք կազմակերպված ներկայանում են երկաթուղու շինարարության վարչություն, ապա ուղղվում Կովկասի կառավարչապետի պալատ։ Բանվորների կոլեկտիվ բողոքի երթը մեծ տպավորություն է գործում։ Մամուլում հրապարակումների շնորհիվ այդ լուրը տարածվում է երկրամասի շատ անկյուններում[29]։ Կարսի տեղամասի բանվորները համառ պայքարով, ի վերջո, հասան իրենց արդարացի պահանջների բավարարմանը։

Գործի ոչ ճիշտ կազմակերպման, շինարարության վարչության ու կապալառուների ճնշումների և կամայականությունների հետևանքով բանվորական ընդվզումներ ու դժգոհություններ էին դիտվում նաև շինարարության մյուս տեղամասերում։ Օրինակ, աշխատավարձը ժամանակին չստանալու կապակցությամբ երկաթգծի 84-րդ վերստի (Ալավերդու մոտ) թունելի վրա աշխատող իտալացի բանվորների մի խումբ 1898 թ. բողոք է ներկայացնում Կովկասի կառավարչապետ Գոլիցինին[30]։

«Մշակ» թերթից տեղեկանում ենք այն գործադուլի մասին, որը տեղի է ունեցել 1899 թ. գարնանը՝ Կարսի մարզի Կաղզվանի աղահանքերում։ Բանվորները, որոնք աշխատում էին 12—14 ժամ և ստանում ընդամենը 40 կոպեկ օրավարձ, բողոքներով ու խնդրանքներով ոչ մի արդյունքի չեն հասնում։ Ուստի դիմելով գործադուլի, նրանք պահանջում են օրավարձն ավելացնել 10 կոպեկով և վերջ տալ վերակացուների ճնշումներին[31]։

Անշուշտ, արխիվային փաստաթղթերի ու ժամանակի պարբերական մամուլի նյութերի հետագա ուսումնասիրումը հետազոտողներին հնարավորություն կտա լրացնելու արևելահայ բանվորական շարժման սկզբնավորման պատմության էջերը։

Արևելյան Հայաստանի բանվորական այս առաջին գործադուլները[32], չնայած իրենց փոքր մասշտաբներին, որոշակի դեր խաղացին բանվորների համախմբման ու կազմակերպման, նրանց դասակարգային ինքնագիտակցության ձևավորման գործում։ Այս առումով տեղին է նշել գործադուլային շարժմանը Վ. Ի. Լենինի տված գնահատականը. «Ամեն մի գործադուլ, որքան էլ չնչին լինեին նրա հետևանքները, տալիս էր ինչ-որ անգնահատելի, նոր, կարևոր, բովանդակալից բան...»[33]։

Տնտեսական հողի վրա ծագած բանվորական այս առաջին ելույթները տարբերային ու տեղային բնույթ էին կրում։ Դրանք թույլ էին ու անկազմակերպ և, որպես կանոն, դատապարտվում էին անհաջողության։ Բանվորները չունեին անհրաժեշտ փորձ ու ղեկավար կենտրոն, գործողությունների միասնական պլան, բացակայում էին պայքարի մասշտաբայնությունն ու հետևողականությունը։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի դրանք միայն առաջին քայլերն էին։ Այսուհանդերձ, բանվորական շարժման սկիզբը որակական նոր երևույթ

---

27 Նույն տեղում, թ. 24։

28 Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 39։

29 «Новое обозрение», 1898, № 4873.

30 ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 1, д. 2343, л. 7.

31 «Մշակ», 1899, № 785։

32 Խ. Բարսեղյանը իրավացիորեն նշում է, որ «Краткая история рабочего движения в России» (М., 1962) աշխատության մեջ անտեսվել են Արևելյան Հայաստանի բանվորական այս շարժումները։ «Առահասարակ գրքի հեղինակները հստակ պատկերացում չունեն հայ պրոլետարիատի նախահոկտեմբերյան շրջանի պատմության մասին»,— գրում է Խ. Բարսեղյանը («Մարքսիզմի տարածումը Հայաստանում», հ. 1, էջ 72)։

33 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 386։

էր մեր ժողովրդի հասարակական կյանքում, դա սկիզբն էր մեծ պայքարի, որն ուղի էր հարթում Արևելյան Հայաստանում մարքսիզմի տարածման համար։

Կապիտալիզմի զարգացումն Արևելյան Հայաստանում ծնեց ամենահեղափոխական ուժը՝ բանվոր դասակարգին, որը շատ շուտով ձեռք էր մեկնելու գյուղացիական և ազգային-ազատագրական շարժումներին, դրանք դնելու էր միասնական հունի մեջ և գլխավորելու ինքնակալության դեմ ուղղված պայքարը։

КЛАССОВАЯ БОРЬБА ПРОЛЕТАРИАТА ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 1890-х ГОДАХ

ВАЧЕ ОВАКИМЯН

Резюме

В 1890-х гг. промышленность в Восточной Армении была развита слабо, что налагало свой отпечаток на развитие рабочего движения. Лишь в меднорудной промышленности и на железной дороге пролетариат был относительно силен и организован, поэтому не случайно первые рабочие движения возникли на строительстве железнодорожной линии Тифлис—Александрополь—Карс. Рабочие движения, зародившиеся на экономической почве, носили локальный характер и, как правило, были из-за слабости обречены на неудачу. Пролетариат не имел необходимого опыта, руководства и плана совместных действий. Несмотря на скромные масштабы, первые рабочие забастовки в Восточной Армении сыграли определенную роль в сплочении и организации рабочих, формировании их классового самосознания. Начало рабочего движения было качественно новым явлением в общественной жизни края и создало благоприятные условия для распространения марксизма в Восточной Армении.